



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ԸՆԴՈՒՄԻ ԸՄԱՐ 8 ՓԵՏՐՎԱՐ 1875

ԶՄԻՌՆԻԱՅ ԸՄԱՐ 8 ՓԵՏՐՎԱՐ 1875

ԹԻԻ 4007

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Միջին Բրիտանիոյ բարձրագոյն ամսոյ 5ին լոտ նոր տուժարի բացուցումը անհաշիւ հոգով զինու : Օգոստոսի տուժարի թագուհին իւր գահախօսութիւնն սկսաւ ծանուցանելով թէ խաղաղասիրական արահմութիւններ կընդունին ի կողմնէ բոլոր տէրութեանց և յաւերցուց այսպէս զերազմիկ խաղաղութիւնն հաստատուն մնաց և համոզեալ եմ թէ պիտի չխռովի : մանաւանդ որ իմ անխնայ ջանից գլխաւոր նպատակն պիտի լինի հաստատուն և յարատեւ պահել զայն :

Ի մասին Սպանիոյ՝ Նորին Վեհափառութիւնն ասաց : «Ալֆոնս իշխանն ի թագաւորական գահէն հրաւիրուեցաւ , և կառավարութիւն իմ քննութիւնն կընէ ի վերայ ընդունելութեան (քէքոնէսանտ) ինքորոյն : Իւր որոշումը պիտի չունանայ : Ի բոլոր որտէ՛ կըփախարկում որ ներքին խաղաղութիւնն շուտով վերահաստատուի այս մեծ բայց զգալի երկրին մէջ :

Անգլիոյ գանձային կայութեան վրայօք խօսելով , թագուհին ասաց թէ գոհացուցիչ է թէ և առեւտրական գործունէութիւնը քիչ մը նըւազեցաւ բաղդատութեամբ ամին անցելոյ : այսու ամենայնիւ ժողովրդոց ընդհանուր յաջողութիւնն կըշարունակէ :

Գերութեան կատարելագէս ջնջուելուն համար հաստատեալ միջազգային խորհրդակցութեան երկրորդ նիստն անգլի ունեցաւ ի Լոնտոն յերրորդում փետրուարի քսան նոր տուժարի : Դաշինքն յայտնեց թէ պատրաստ է վաւերացնելու առաջին գաղտնիքը՝ զորս մեծ տէրութիւնքն խափշիկներու առեւտրոյն նկատեմք հաստատելին վէճնայի ժողովոյն մէջ յամրն 1815 : Բարձրագոյն Դուռն յօժարամիտ պիտի փութայ մասնակից լինել այս որոշմանն՝ երբ կըտրական կառավարութեանց մին գետնաշակեան միջոցաւ հրաւիրէ զեա , ինչպէս որ կը փախարկ խորհրդակցութիւնն : Իսկ Ռուսիոյ կառավարութիւնն այս մարդասիրական խոր-

հրդակցութեան արժանիքն ևս առաւել կը ճանաչէ և կը յարգէ : Վանդի նոյնինքն Ռուսաց օգոստոսի տուժարի ղերութեան ջնջման օրինակը տուաւ , ոչ միայն իւր ընդարձակ տէրութեան մէջ , այլև յամենայն երկիրս , ուր իւր խրատուց և իւր իշխանութեան ազդեցութիւնը կըցաւ տարածուիլ :

Անգլիոյ հասարակաց խորհրդարանին մէջ երեսփոխան մի իմաց տուաւ թէ մտադիր է հարցում մի ուղղել նախարարաց ժողովոյն՝ ի վերայ կայութեան թուրքիոյ՝ Անգլիացոց օգտից նկատմամբ : Թուրքիոյ մէջ Անգլիացոց օգուաններն արժանաւորագէտ պաշտպանեալ լինելով միշտ , տարակոյս չկայ թէ յիշեալ երեսփոխանին ընելու հարցումն օրինաւոր հիման մը վերայ կայացեալ պիտի չլինի :

Եթէ Գաղղիոյ լրագրաց ոմանց դրածին հաւատ ընծայելու լինիմք , հասարակագետական կուսակցութիւնը զօրանալու վերայ է թէ վերասայի ազգային խորհրդանոցին մէջ և թէ ընտրական ընտելոյն առջև : քանզի Մէն—է—նաւը գաւառին մէջ մտիւ վաշտնիւնն որ հասարակագետական է , 55,000 քուէիւք երեսփոխան ընտրուելու է ընդգէտ՝ 40,000 քուէից , զորս հազիւ թէ կըցեր է ի ձեռս բերել Բատուի դուրսն , որ Պոնաբարդեան կուսակցութեան կըվերաբերի :

Գաղղիոյ ժառանգ Օֆի—է—նաւանեալ պաշտօնական օրագիրը կըհրատարակէ թէ՛ փարիզ մայրաքաղաքին փոխառութիւնն (զոր կարծեմք թէ 50 միլիոն ֆրանք պիտի լինի) 42 անգամ աւելի գումարի ստորագրողք գտեր է : Այս եղելութիւնն անժխտելի ապացոյց մըն է Գաղղիոյ հարստութեանն , ինչպէս նաեւ հաւատարմութեանն զոր կըվայելէ :

Սոսիալի շուրերն հակասական են միշտ ինչպէս որ էին հասարակագետութեան ժամանակը : Գանդի ինչպէս Ալֆոնսեան կուսակցութիւնը կըհաստատէ , կարգոսեան կուսակցութիւնն

սուտ կըհրատարակէ : Կըհաւատեն թէ երկտասարդ թագաւորն որ թէև պատերազմի մը մէջ ընդգէտ՝ Կարողութեան զօրանակին , չկըրցաւ յաջող ելք մի ի ձեռս բերել , պիտի վերադառնայ ի Մատրիտ ամենայն հանգարաւութեամբ : Միւս կողմանէ խօսք կըպտտի թէ Տոն Կարողութիւն Ալֆոնս թագաւորին մէջ բանախօսութիւնք կըլինին հաշտութիւն մի կնքելու համար բարեկամաբար :

Ժամանակէ մը հետէ խօսք մի տարածուած էր թէ Սերվիոյ և Ռուսիոյ իշխանութեանց մէջ պաշտպանողական և յարձակողական դաշնի դաշնագրութիւն մի հաստատուած է : Պուրէշի կէս պաշտօնական լրագիրն Մամուլ—կաշուած փութացաւ ի սուտ հանել զյիշեալ խօսքը յատուկ յօդուածով մի , յորում ի մէջ այլոց և զճեռեւեալներն կըգրէ :

Սերվիոյ և Ռուսիոյն այսինքն Մոլոտովա—լաքիան ունին իւրաքանչիւրն իւր մասնաւոր և իրարմէ բոլորովին անկախ գոյութիւն մի : և կըյուսամք թէ այս երկու իշխանութեանց մէջ ամենագորաւոր և յոյժ բարեկամական յարաբերութիւնք հաստատեալ են : այսու ամենայնիւ մինչև ցայսօր որեւէ օգուտ մի կամ հարկ մի չունեցանք պաշտպանողական և յարձակողական դաշնագրութիւն մի ընելու Սերվիոյ հետ : Այսպիսի դաշնագրութեան մի գոյութեան խօսքը պարզագէտ կարծիք մը և մոտցածին զիւտ մըն է , որ տարածուեցաւ ի ժամանակին յորում պատիւ ունէինք հիւրընկալութիւն մատուցանելու Սերվիոյ Միլան իշխանին : Մեր համակրական սիրոյն փոխադարձութիւնն մեր միմիայն կապն է Սերվիոյ հետ : Այս երկու երկիրներէն իւրաքանչիւրն իւր յատուկ զարգացման ճանապարհը կըլծայ : և կընամք ապահովցնել ամեն նոր լուրեր հնարողները թէ մեք ամենեւին թշնամի չեմք թուրքիոյ : որոյ հետ մեր ունեցած յարաբերութեանց մէջ միայն մեր իրաւունքը յարգելու կաշխատիմք :

Գէտ՝ Մուրատեան վարժարանի վերաբերութեւ , որի իւրօք տեղծիչը , յառաջ մղողը ինքը հայր թէոդորեանն էր : և մեզ գրաւող ու կարեւոր մասը յիշեալ «Թիւթակցութեան» հէնց այդ է : ուստի աւելորդ չեմ համարում քաղաքացիներ առնել նոյն նամակներէ , որով հեղինակի ողին պահպանելով լաւ դադափար կըստանանք յիշեալ ինքիւնների անխիթով , մանաւանդ Մուրատեան վարժարանի մասին , որի հարցը աւելի ընում քան թէ զարմնում է :

Պապը իր անսխալութիւնը յայտնի քարոզելով , նորից մերմընց այն ճշմարիտ քրիստոնեայ սրտերը , որոնք Աւետարանի ողին լաւ բմբուներով , ոչ թէ անսխալականութիւնը , այլև հին պապական իշխանութիւնը անգոհումէին : Ահա թէ ինչ է ասում հայր թէոդորեանը աբբայ Հիւրմուղին այդ մասին . . . «Միտիւթարեալ եմ արդ չափաւորապէս , զի հաւանեալ ձեր ճշմարտութեան և արդարութեան ոչ հաւանեցոյք հաստատել զստութիւն և զանխառնութիւն զանսխալութիւն և զամբարհաւածութիւն ասեմ Պապին Հռոմայ . . . :

Մնայ ձեզ այսուհետև ջնջել զյանցանս ձեր զոր յոչ կամաց և ընդգէտ խզի մոտաց արարէք դուք երբեմն , զսուտ և զանխառն յայտարարութիւնք ասեմ , որ առ Պապին Հռոմայ . . . :

«Պապն է ձեզ արդ առնել զյայտարարութիւն մի վասն ուղղափառ դաւանութեան և առաքելականք արարողութեանց Հայաստանեայց ե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Թիֆլիզի ՄՇԱԿ քաղաքին՝ անցեալ ամին Դեկտ. 26 րոյն մեզ փարիզին ՅԱՐՈՑ կեղծ ստորագրութեամբ գրեալ նամակ մի կընրեւանուի , որ ազգօգուտ եւ խոնական խորհրդածուրիւններ կըպարունակէ :

Անաւասիկ յիշեալ նամակը , գոր աշայրուքեամբ ընթերցելոյ արժանի կընամարիմք :

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՅ

8 Դեկտեմբեր 1874

Նորերս ձեռքս ընկաւ մի բրօշիւր այս վերնադրով «Յայտարարական թղթակցութիւն Սարգիս վարդապետի թէոդորեան ընդ Գէորգ Հիւրմուղ Աբբայի Միտիւթարեան , յաղագս ճշմարտութեան և արդարութեան : վասն անբիծ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ ասեմ , և վասն իրաւանց որք և աղքատ մանկանց ազգիս Հայոց հասարակաց , որ ի Մուրատեան վարժարանի» քաղեալ ի թուոց «Արշալուստ Արարաբեան» : Տպագրութեան տեղը հաւանական է , որ Զմիւռնիան լինի :

Այս բրօշիւրը՝ ինչպէս վերնագրից էլ երեւում է , պարունակում է իր մէջ հայր Սարգիս թէոդորեանի երկու նամակ , և մի նամակ հայր Գէորգ Հիւրմուղ Միտիւթարեան Աբբայի իրբեւ պատասխան հայր թէոդորեանի «Թղթակցութեան» : Չնայելով բազմախոսակ թէոդորեանի

Բարեբաղդ աշար Բուսանիան աշխարհագրական այնպիսի գիւղք մի լուսնի, որ միայն օդուտ' և ոչ երբեք փնաս կրնայ պատճառել Թուրքիոյ:

Յունաստանի աղգային օրէնսդիր ժողովն իւր նիստերն դադրեցոյց ըստ հրամանի թագաւորին Այս տնօրէնութեամբ հակառակորդ կուսակցութիւնն իւր նպատակին հասաւ սակայն ընտրողաց հաւանութիւնն ևս կրցաւ արգեօք ստանալ:— Ժամանակն շուտով պիտի յայտնէ:

Կառավարութիւնն որոշեց որպէսզի Աթէնքի վարժարանաց ուսմանց ծրագրին մէջ Թուրքերէն լեզուին ուսումն ևս աւելնայ: Այս որոշումն ընդհանրապէս հաճելի եղաւ նոյն մայրաքաղաքին ժողովրդեան, և լրագիրք գովութեամբ կը հրատարակեն զյիշեալ տնօրէնութիւնն. զոր յոյժ օգտակար կը համարին:

Յայտնի է թէ յանցելումն Անգղիոյ Աւետարանական ուխտը պատգամաւորութիւն մի յուղարկած էր 'ի Կ. Պօլսի, որպէսզի պատիւ ունենայ օգոս. Սուլթանին ներկայանալ և 'ի ձեռս նորա յանձնել յիշատակագիր մի 'ի մասին կրօնական ազատութեան վիճակին 'ի Թուրքիա:

Որովհետեւ Ասորեաց մէջ 5—6 մահմետական երկտասարդք՝ զինուորագրութենէ ազատ մնալու նպատակաւ բողոքական կրօնն ընդունած էին, տեղական կառավարութիւնն հարկ համարեցաւ զյիշեալ բողոքականներն բանտարկել: Աւետարանական ուխտն այս դործոյ մէջ կրօնական ազատութեան սկզբանց հարուած մի տեսնել կարծելով, որոշեց իւր պատգամաւորաց բերնով ուղղակի բանախօսել Սուլթանին հետ, և թողտուութիւն խնդրել 'ի Նորին Վեհափառութենէ որ իւր քարոզիչ վարդապետաց ձեռօք ազատաբար աշխատի բողոքական ընելու ոչ միայն Թուրքիոյ քրիստոնեայ միամիտ բնակիչները այլև մահմետական ժողովուրդները:

Կ. Պօլսոյ գաղղիական լրագիր մի, յորմէ կը քաղեմք այս տեղեկութիւններն, կըսէ թէ 'ի լուսաւորեալ դարուս յորում կայրլմը, բողոքական կրօնի տարածման համար եղած քարոզութիւնն՝ ծանր զարտուղութիւն մըն է. մահաւանդ որ այնպիսի միջոցներով 'ի գործ կը դրուի զորս ոչ միայն բարոյականութիւնն կը մերժէ՝ այլև օրէնքն կը դատապարտեն: Վասնզի Թուրքիոյ ժողովրդոց մէջ կրօնական զգացումն այն աստիճան արմատացեալ է, որ առանց նիւթական օգտի մը ակնկալութեան, չատքիչ անձինք կը գտնուին որ բողոքական կրօնն ընդունելու հաճութիւն տան: Ուստի բողոքական քարոզիչք, փոխանակ Թուրքիոյ մէջ 'ի զուր

վատակելու, լու կընեն գէտ 'ի Ձինստոսն և յայլ հեռաւոր երկիրներն երթալ և զիւրապշներն դարձնել յԱստուածապաշտութիւն:

Ձիարդեիցէ, Բարձրագոյն Գուռն արժան համարեցաւ որ Աւետարանական ուխտին պատգամաւորութիւնն Սուլթանին ներկայանայ, այլ խնդրեց որ իրեն յանձնուի յիշատակագիրն որպէսզի արտաքին գործոց պաշտօնեան պատեհ առթիւ մը, մատուցանէ զայն Նորին կայսերական Վեհափառութեան:

Յիշեալ պատգամաւորութեան անդամքն այս պատասխանէն գոհ չլինելով, արժան համարեցան վերագառնալ յԱնգղիա՝ իրենց հետը տանելով զյիշատակագիրն:

ԱԶԳԱՅԻՆ

Կ. Պօլսոյ աղգային քաղկրներն կը հրատարակեն զկայսերական հրովարտակն, որ ըստ սովորութեան՝ շնորհուած է յիշեալ մայրաքաղաքին ամենապատիւ տէր Ներսէս Ա Պատրիարքին:

Ահաւսիկ յիշեալ կայսերական հրովարտակին հայերէն քարգմանեալին, որուն բնագրին վերայ կայսերական ձեռօք գրուած է ՄԱՐԾԱԼԱՅՍ ԱՐԱՐԱՆԵԱՆ ՍԵՒՈԼՈՒՆԱՅ, այսինքն ըստ այսմ գործադրեցի:

ԹԱՐԳԱՆԱԼԻԻՆ

Կ. Պօլսոյ և շրջակայից համար Հայոց Պատրիարք Միկայիլ Եպիսկոպոսը հրաժեշտ տուած ըլլալով Պատրիարքութենէ՝ հրաման քաշ էր ուրիշ մը կապել. ուստի հաստատեալ ընտրական օրինաց համաձայն Հայոց աղգին պաշտօն ունեցողներէն լինելը ըստ սովորութեան Պատրիարքարանը գումարուելով սոյն Արքայական հրովարտակն ընդունող Նիկիոյից առաջնորդ և պատրիարքական Տեղապահ վարժապետեան Ներսէս Եպիսկոպոսը է՝ Գ. հա. հաւանութեամբ Պատրիարք ընտրուած և հանրագրութեամբ Նորա հաստատութիւնը խնդրուած ըլլալով իմ կաշտերական Վեհափառութեան հաղորդութեամբ, և ըստ այնմ ընդունելով՝ 1291 թէպէլ Էփէլ ամսուն 25 թուականու իմ Արքայական բարձր հրամանին համաձայն պէտք եղածը գործադրուած ըլլալով՝ իր պաշտօնին մասին արքայական գիւսանէս յետագայ պայմանները պարտաւորուելով թագաւորական ձեռնագրով փայլող սոյն Արքայական հրովարտակն տուի իր ձեռքը և հրամայեցի որ յիշեալ վարժապետեան Ներսէս Եպիսկոպոս՝ Կ. Պօլսոյ և Անատոլի և Բուսանի և շրջակայից Հայոց պատրիարքութեան պաշտօնը վարէ, և մինչև 'որ իր Ազգին

կրօնական և հաստատեալ օրէնաց հախալ ընթացքի մէջ չգտնուի, կամ՝ կայսերական կուսակարութեանս գէտ՝ անհաւատարմութիւնը չտեսնուի և կամ՝ ինքնին չհրաժարի՝ ցկեանս վարէ այս պաշտօնը. և եթէ յիշեալ պարագաներուն մէկուն պատճառաւ հրաժարիլ հարկ ըլլայ, այն ալ Սահմանագրութեան յօդուածոց և արամագրութեան համաձայն գործադրուի, և պատրիարքութեանը ներքեւ գտնուած Եպիսկոպոսներ, Առաջնորդք և Վահանայք զինչը Պատրիարք ճանչնալով՝ պատրիարքութեան վերաբերեալ գործոց մասին իրեն գիմեն և ըստ ամենայնի հնազանդ գտնուին. և պատրիարքութեանը ներքեւ գտնուած առաջնորդք և քահանայ և կրօնականները եթէ իրենց կրօնից համաձայն հրաժարեցնելու կամ պաշտօնի մէջ հաստատելու ըլլայ՝ ոք ոք միջամտէ. և եթէ Առաջնորդներուն մէկուն փոփոխութիւնը հարկ ըլլայ և յիշեալ Պատրիարքին և Ազգային ժողովին կէքովը վաւերացեալ թագրիւր մատուցուի, առաջնորդական պայմանները պարունակող իմ բարձր հրովարտակն արուի և ուրիշ խնդրանք առաջնորդութիւն չարուի. և այն առաջնորդներուն և Եպիսկոպոսներուն մասին հրաժարեցումն կամ՝ արտաքին կամ՝ ամբաստանութեան գիր գալ թէ փաշաներէն թէ Գառններէն և թէ Նայիպներէն՝ մինչև որ յիշեալ Պատրիարքէն չտուգուի, հաւատ չընծայուի. և եթէ որ և է եղանակաւ հին ու նոր թուականաւ հրամանաւոր ալ ելած ըլլայ, և յարգելով զայն՝ և քննութիւն ըլլալով պարա ու պաշտածը անօրինակ. և եթէ առաջնորդներէն և Եպիսկոպոսներէն մէկը գործով մը մայրաքաղաքը գալով իւր տեղ ուրիշ վարդապետ մը փոխաւորը կարգելու ըլլայ՝ ոչ ոք հակառակի. թէ իրեն և թէ առաջնորդաց և քահանայից տուները և բնակատեղիները ազատութեան համաձայն կրօնական արարողութեան և ասոր վերաբերեալ գործառնութեանց և ոչ մէկ կողմէ մը արգելք և հակառակութիւն և միջամտութիւն չըլլայ. և ի վաղուց անտի իրենց սեփականութիւնն եղած եկեղեցեաց և վանքերից և թէ մայրաքաղաքս և թէ դրսերը գտնուած ուխտատեղեաց, և իրենց սովորութեանը համաձայն մեռելոց յաւարկաւորութեանը և ուրիշ կրօնական արարողութեանցը ոչ ոք միջամտէ և արգելք յարուցանէ: Յիշեալ Պատրիարքին և Ազգային ժողովին կէքովը մատուցեալ թագրերները յարգուելով իրենց կրօնի վերաբերեալ ինչ ինչից որ ներկայացնեն և տեղեկագրեն՝ գործադրուի. և յիշեալ աղգին յատկաց

կեղեցւոյ ի գիտութիւն Պապին և համօրէն եպիսկոպոսաց նորա՝. . . :

Խօսելով Հռոմայ վերին ընդհանուր ժողովի և աշխարհական իշխանութիւնը Պապին ձեռքից իւրելու մասին իտալիայի թագաւորին ձեռքով, շարունակուած է. . . Վհա՛ ձեռք գէտ ժամանակ յընկենու ի ձէնը զլուծ պապին և ի կատարել զուխտս ձեր ըստ նպատակի Միսիթար Արքային, ի լուսաւորել զաղգս Հայոց. . . ուսուցանել նմա զպատուէր Քրիստոսի՝ զսէր ընկերին, և ոչ ըզպատուէր Հռոմայ Պապին, զիսքիս հակառակութեան և զմիմանս ատելութիւն. . . Այստեղ արդէն խօսքը դարձնելով դէպի Մուրատեան և Ռափայէլեան վարժարանները, յառաջ է առնում այսպէս. . . Վհա՛ ձեռք գէտ ժամանակ ի ընու զպարտս ձեր ըստ գիտաւորութեան հանգուցեալ բարեբորաց՝ եղուարդ Ռափայէլի և Սամուէլ Մուրատի, ի լուսաւորել զաղգս Հայոց. . . ուսուցանել նմա զկարեւոր գիտութիւնս և զկենցաղօրուտ արուեստս. . . մանաւանդ յայսմ ժամանակի, յորում փափագի նա գիտութեան և կարօտի օգնութեան արծաթոյ, զոր ունիք դուք ի ձեռնի դրամ բաւական իրրեւ չորս միլիոն (ս. թ.) հրէական, թողեալ կտակաւ ի վերոյիշեալ բարեբորաց վասն դպրոցաց որք և աղքատ մանկանց Հայոց հասարակաց առանց ինչ խտրութեան. . . :

Յետոյ անցնում է վարդապետական խօսքերով և իրաւանք է ապի Միսիթարեաններին,

որ ստիպուած եմ դարձեալ քաղել, պատճառ՝ բովանդակութիւնը պատմելով չունենայ ազգեցութիւն ընթերցողի վրայ. . . ուստի թոյլ տուեցէք արտադրեմ. . . Վհա՛ յարուր ընդ համազգի եղբարս ձեր, ընդ որդիս Հայաստանեայց եկեղեցւոյ. . . Եթէ երկնիք դուք ի նզովէն Պապին. . . յուշ լինի ձեզ նզովն նորա առ թագաւորն իտալիոյ՝ առ Վիկտոր Լեմանուէլ. թողից ասեղ զաղգեցութենէ նորին առ հակահաստեանս և առ միաբանս, որք ի Պօլս և զք նայից նոցա. զի անարգէն նոքա՝ զգուռն իւրեանց զՊապն, հետեւելով հրամանի նորա, և յարդէն զուտ նորա պահելով անտի զկաշտումն իւրեանց. . . Զանազան համեմատութիւններ անելով և յիշելով Միսիթարեան միաբանից ոմանց արհամարհանքը դէպի Պապը որոնք այժմ եթէ կենդանի լինէին, սրտով կը ցանկանային զարժանին առնել, ասելանում է. . . ոչ կամիմ զի թշնամի լինիք դուք Պապին Հռոմայ. . . այլ կամիմ զի աղքատ լինիք դուք յիշխանութենէ նորա իրրեւ զներսէս Շնորհալին. . . :

Այստեղ պատմում է, որ Ներսէս Շնորհալին Հռոմայ Պապից ճանաչուած էր հաւատով ուղղափառ. բայց նորա յաջորդները մոլեւանդութիւններ և իրանց արքանեակներն չնորքով համարուեցան և համարութեան հերձուածող և հերետիկոս: Այն արքանեակները մինն էր և աղգատեաց տէր Բարսեղ մէկը՝ ինչպէս և յիշում է հայր Թէոփորեանը, որի տգիտու

թիւնը խայտառակեց իտալերէն լեզուով հայր Պապեցիէ վարդա. Աւետիքեանը, ի յանդիմանութիւն հակառակորդաց:

Շարունակելով նամակը ցաւակցութիւն է յայտնում հայր Ստրգիսը, որ Միսիթարեանք այլքան դասեր աչքի առաջ ունենալով, ընկալմանում՝ ճշմարտութեան որդիք դառնալով, երկու մեքով շատանում են այս և այն կողմի, և որ չեն կամենում միանալ աղգի հետ և յաղթանակել թշնամուն «որպէս տեսաք աչօք մերովք, ասում է, առ գերմանացիս և նոյնի հակառակն առ գաղղիացիս»: Եւ դարձեալ պատմադրների խօսքեր և ուրիշ խրատներ առջ բերելով, պատմում է իր քաջած ցուր և տառապանքը Մուրատեան վարժարանի կտակած գումարը ձեռք բերելու ժամանակ, որով վերջացում է իր առաջին նամակը: Ահա իր խօսքերը. . . Հարցանեմ ձեզ թէ եղեալ իցէ երբեք ի միաբանութեանդ ոք, որ զամս եթանասուն նուիրեալ իցէ զանձն ի բարութիւն աղգիս. . . հանդերձ վշտօք և արժանեօք. վիշտ ի ծովոց զամս երկու, վիշտ ի սօթոյ Հնդկաց՝ զամս երկուստան, վիշտ ի դատաստանաց՝ զամս չորք տասան, վիշտ ի սուտ եղբարց՝ զամս երեսուն և արժանիք՝ երկերկու յիսուն հաղար 250,000 փրանք. թող զերկու միլիոն ֆրանք զհրէական դպրոցին, զոր մահուչափ աշխատութեամբ ի ձեռս բերէ և հարկւորեայ բանտարկութեամբ պահպանէ. միաբանութիւնդ կամի և հրամայէ

եալ եկեղեցիները և ուխտատեղիները առանց
բարձրագոյն հրահանգի քննութեան և խաղա-
կութեան չենթարկուին . և հին դրից մէջ և
ըստ սովորութեան ըլլալիք նորոգութեանց ար-
գելք չյարուցուի . և իրենց սեփական եկեղե-
ցիները պաշտօնական դրութեամբ ուրիշ չը-
արուին և ուրիշին պարտուցը համար եկեղեց-
եաց և վանօրէից գոյիցը միջամտութիւն չըլլայ
և իբրեւ գրու չառնուի, և եթէ կերպով մը
առնուած ալ ըլլայ Շէրիի օրինօք ետ առնուե-
լով իր տեղերը պարտին . և յիշեալ ազգէն մէ-
կը իրենց կրօնից համոզման ամուսնացնեն կամ
ամուսնական կապը խզեն սոյն արարողութիւնը
ըստորում յիշեալ Պատրիարքին կամ կարգած
փոխանորդներուն միջոցաւ ի դօրծ կըդրուի .
ուրիշներուն միջամտութեանը պէտք չէ թոյլ
տալ : Եւ առանց յիշեալ Պատրիարքին կամ Ա-
ռաջնորդներուն կամ փոխանորդներուն գիտու-
թեանը և արտօնութեանը թէ մայրաքաղաքին
մէջ և թէ դրսերը հակառակ իրենց կրօնին պը-
սակ դնող քահանայից կամ փոխանորդաց հարկ
եղած պատիժը արտելու առան ոչ ոք միջա-
մտէ . եթէ պատկերութեան կամ պատկի լուծ-
ման և կամ իրենց կրօնի վերաբերեալ խնդրոց
մէջ երկու փոխանորդաց մէջ ունենան և Պատ-
րիարքը կամ փոխանորդը քննելով ըստ կրօնի
կարգադրեն և կամ եկեղեցիներուն մէջ երգ-
մանցնեն կամ բանագրեն , Գաւառները և Նայ-
իպները չմիջամտեն . և որովհետեւ յիշեալ ազ-
գին կրօնքը կարգիլէ զերեւել որ կնաթողու-
թիւն չընեն և կին ունեցողը ուրիշ կին չառնուի,
և կիններին մեռնելէն վերջ միայն երեք ան-
գամ կարենան ամուսնանալ և ոչ աւելի , հա-
կառակ վարուողներուն արգելք և յանգիմանու-
թիւն ըլլայ . և կրօնից հակառակ պատկ ձեւացը-
նողներուն եկեղեցի մտնել արգելեալ ըլլալուն
նոյն վիճակին մէջ մեռնողները քահանայից մի-
ջոցաւ թաղուելու համար Գաւառները Նայիպնե-
րը և ուրիշ հրամանատարք չարկեն և առա-
ջարկութիւն չընեն . և առաջնորդներէն և եպիս-
կոպոս և վարդապետ և կրօնականներէն և ու-
րիշներէն մէկը եթէ իրենց գոյքէն քիչ մը բան
կամ 1/3 մասը իրենց կրօնին համաձայն եկե-
ղեցեաց և ազգատաց և պատրիարքաբանի կը-
տակելով վախճանին , կտակը դօրծադրելի և
ընդունելի ըլլալով իրենց կրօնից և օրինաց հա-
մաձայն Շէրիի միջոցաւ իրենց ազգէն վիշտներ
մոտի ընելով, մեռնողին ժառանգներէն առ-
նուի . և առանց ժառանգ ունենալու վախճա-
նող Առաջնորդաց և քահանայից և կրօնական-

նաց և մայրապետաց թէ ստակ թէ կարասի ,
թէ ձի և թէ ուրիշ ինչ որ կայ եթէ Պատրիար-
քը կամ իր փոխանորդը առնելու ըլլան Պէյ-
թիւնալի և Գասամի և Միւթէվէլիներու և
Մուհաքքներու կողմէն միջամտութիւն չըլլայ .
և ժառանգ ունեցողաց ստակին և ընչից և գո-
յից Պատրիարքը և փոխանորդը ձեռնամուխ
չըլլան . և իրենց կրօնին հակառակ վարուող
Հայ Առաջնորդ և Գահանայ և կրօնաւորները
եթէ Պատրիարքը իրենց կրօնին համաձայն պատ-
ժէ և մօրուքին ածելով զիրենք եկեղեցա-
կան կարգէն լուծէ և իրենց եկեղեցիները ու-
րիշ տալով ուրիշներ կարգէ , դուրսէն ոչ ոք
արգելք ըլլայ և նեղէ . յիշեալ Պատրիարքին
պատրիարքութեան ներքեւ գտնուած տեղե-
րուն եկեղեցեաց և վանօրէից և բոլոր պարու-
նակութեանց և եկեղեցեաց վազֆ եղած գոյից
և անասնոց ոչ ոք ձեռնամուխ ըլլայ , և ի վա-
ղուց ինչպէս որ էր նոյնպէս մնայ սեպհականու-
թեան իրաւունքը : Հայոց ազգը ինչպէս որ ի
վաղուց նոյնպէս և այսուհետեւ պէտք է վճարէ
արքունի տուրքը և ողորմութեան և Պատրիար-
քաբանի տուրքը և ծախքը և պատրիարքու-
թեան յատկացեալ ստակը և պէտք չէ հակա-
ռակիլ : Եկեղեցեաց և վանօրէից փոխանորդնե-
րը պատրիարքական հասցիք և արքունի տուր-
քը ստանալով եթէ իւրացնեն հաշիւին տես-
նուելով վճարել տալու միջոցին ոչ ոք միջամտէ .
և այս հաշուէն որ տեղի առաջնորդ կամ կրօ-
նականէն որ ըլլայ Պատրիարքը եթէ առնելիք
ունենայ և ստանալու համար իմ բարձր հրամա-
նագրով և իր նամակով կարգած անձանց՝ Գա-
տը և Նայիպները ըստ Շէրիի ձեռնառու ըլլան և
առնել տան . Պատրիարքին յատկացեալ այգիի
բերքը և նուէր անուանով ազգին տուած գինին
և իւղը և մեզըրը և գոյքերը իր բնակարանը փո-
խադրուած միջոցին ի վաղուց անտի եղածին
համաձայն նաւամատոյցները և դռները մաքրի
պաշտօնէից կողմէ արգելք չպատահի . և յիշեալ
Պատրիարքին և առաջնորդաց և եպիսկոպոսաց
վերաբերեալ և եկեղեցեաց յատկացեալ գոյ-
քերէն նաւամատոյցները և դռները մաքր և բաժ-
նաճանջուի և չառնուի . եթէ հայոց քահանա-
ներէն մէկը Շէրիի հրամանաւ բանտարկեալ հարկ
ըլլայ , Պատրիարքը պահէ և ուրիշ չընտարկէ .
և եպիսկոպոսաց և ոմանց Շէրիի վերաբերեալ
ունեցած դատերին մայրաքաղաքս յանձնուե-
լով ըստ արձանագրեալ պատճառութեանց ար-
դարութեամբ քննութիւն ըլլայ և կարգադրուի :

Նմա (ինձ) հրաժարիլ ի պահանջմանէ իրաւանց
որը և ազգատ մանկանց ազգիս Հայոց, և զայն
արժաթն, զոր ունի արդ միաբանութիւնք ի ձե-
ռին իւրում և զոր մատակարարէ ըստ հաճոյից
իւրոց և վայելէ ևս . . . :

Եսայիսի զօրաւոր խօսքերով պաշտպան է
հանդիսանում որը և ազգատ Հայաստանի որ-
դուց մօտ իննսուներեք տարեկան ծերունին ,
որ չնայելով հեռաւոր տեղեւորութեամբ գտնուե-
լուն աւելի մօտ է հոգւով Հայ պատերազմ , իսկ
մեր ազգային վաղուց թիւնները , սօքա վարում
են Հայաստանի որդւոց համար ամեն տեսակ
գործոց պատրաստութիւններ , մի քանիսը հե-
տեւելով Քրիստոսական քաղաքականութեան . . .
իսկ միւսները յաւիտենական աշխարհի քաղա-
քականութեան . . . :

Հայր Գեորգ Հիւրմիւզ Աբրայի նամակը , որ-
պէս պատասխան հայր Թէոդորեանի առաջին
նամակի վարժարանի մասին , ոչինչ չէ յիշատա-
կում . իսկ գումարներին յիշատակելու համար էլ
կայ . այլ առաւել կրօնական հարցերի մասին
խօսելով, բաւականանում է , թէ ոգորեանի
պատուելի ցանկութիւնը ու ազգասիրական նա-
խաձըր դուրելով և աւելացնում այս խօսքերը :
Եթէ յախուռն ոք փութալ կամիցի առանց ի-
րօք օգտի՝ Պատանցի մանաւանդ . . . :

Թէոդորեան հայրը ստանալով այդ պիտի չոր
ու ցամաք պատասխան չբաւականանում, այլ
նորից գրում է մի ուրիշ նամակ դարձեալ նոյն
աբրային , որի մէջ թէ առաջին նամակի նման

կրօնական հարցեր յարուցանելով և թէ Միւթ-
թիւնեանց մի քանիսի վարժեալքը պատմում է :
Այստեղ էլ քաղենք ուշադրութեան արժանի
տողերը , առաւել վարժարանի մասին : «Աստա-
նոր ի գէտ և կարեւոր համարեմ յիշատակել
զնշանաւոր նամակն կտակաւոր որդւոց հան-
դուցեալ բարեբաբին Սամաէլ Մուրատի , որ
առ դերաւ Սուլթան Սոմալ» :

Այս այն նամակն է , որով Մագրաս քաղա-
քից 1827 թուին Մարտ ամսի 20ից Ս. Մուրատ-
եանի կտակաւորները Պ. Պ. Եդուարդ Ս.
Մուրատ և Յովհաննէս Յ. Մուրատ յայտնում են
նոյն ժամանակի Միւթթիւնեան ընդհանուր աբ-
րային Մուրատ Սոմալին կտակած գումարի
յանձնելը հայր Թէոդորեանի ձեռքը , որ է 640,
500 Մագրասու ուլիք , և ինդրում են , որ
այսքան ջանքով ձեռք բերած գումարը գործ
գրուի հայկական դպրոցի վրայ , ըստ գիտաւո-
րութեան կտակողի : Սարգիս Թէոդորեան հայրը
ամբողջութեամբ տալով է այդ նամակը իր
բօշիւրի մէջ , շարելով հէնց այդ նամակի կող-
քին իր նամակն էլ նոյնպէս ուղղած Սոմալ ար-
քային , որին աւետում էր ուրախութիւնը այն
գործի համար , որ օգուտ պիտի բերէր ազգին
ընդհանրապէս : Սրանից յետոյ այս խօսքերն էլ
շարունակ . . . «Ահա ամբ քառասուն են , զի ա-
ւանդեցի ես ի ձեռս միաբանութեանդ երկու
միլիոն ֆրանք հրիտակն , թողեալ կրտակաւ ի
հանդուցեալ Սամաէլ Մուրատէ ի կատարումն
հայկական դպրոցին :

Յիշեալ Պատրիարքը իր պաշտօնը վերագրեալ
հնաւանդ պայմանաց համաձայն վարէ , և իր
պաշտօնին վերաբերեալ գործոցը որ և է կեր-
պով ոչ ոք միջամտէ և հակառակի . այսպէս
գիտնան և իմ նուիրական նշանս յարգեն :

Թիֆլիզի Մեղու Հայաստանի լրագրոյն յուն-
ուարի 12 թուոյն մէջ զհետեւեալն ընթերցումք :
«Մենք անցեալ տարուայ 50 համարում տպած
էինք ինչպէս լուր , իւր թէ նորերումս դուրս է
եկել ցենզուրայից հանդուցեալ Մաներ Մսերեան-
ցի ձեռագիրը՝ «Պատմութիւն վերջին չորից կա-
թողիկոսաց եփրեմի , Յովհաննէսի , Ներսէսի և
Մատթէոսի» :

«Այժմ մեծա . պարոն Զարմայր Մսերեանցը
մէջ հաղորդում է , որ ցենզուրայից դուրս է ե-
կած և հրատարակութեան համար պատրաստած
է նորա հանդուցեալ Հօր երկասիրութիւնը հե-
տեւալ վերնագրով . «Պատմութիւն կաթողիկո-
սաց Էլմիաճնի ի Սիմէօնէ մինչև ցօղհաննէս Ը» :

«Այս երկասիրութեան մէջ՝ պարոնի ասելով,
պատմութիւն են այն անցքերն որք եղած են ի
1763է մինչև 1831 թուական , և թէ այն տեղ
չունին տեղի ոչ ցօղհաննէսի , ոչ Ներսիսի և ոչ
Մատթէոսի կաթողիկոսութիւնքն : Պարոնը
մտադիր է այս վերջին երեք կաթողիկոսաց
պատմութիւնքն հրատարակել պատահ ժամա-
նակին» :

«Պար տիւ Պոսթօր լրագրը կըմանուցանէ
թէ քանի տարիներէ իվեր եւրոպայի երկիր-
ները ճանապարհորդող Կ. Պոլսեցի հայ ուսում-
նագէտ տիկին մը այս անգամ լոնտրայի մէջ
ճանկատանի նկատմամբ , իւր հեղինակութիւնն
բլլալով , հետաքրքրական գիրք մը հրատարա-
կեր է , հայերէն լեզուաւ . նմանապէս դարձեալ
իւր հեղինակութիւնն բլլալով , տաճկերէն քերա-
կանութիւն մ'ալ ի լոյս ընծայեր է յիշեալ քա-
ղաքին մէջ : Սոյն երկու գործերն ալ թէպէտ
տակաւին հասած չեն մայրաքաղաքս , սակայն
մեր ազգակից և հայրենակից սոյն ուսումնադէտ
հեղինակուհւոյն օվ լինելն՝ բերկրութեամբ լսել-
նուս կ'ըստասեմք :»

ՄԱՐԱՍՏԱՅ ԳԵԿ . ամառքէն կիմանումք թէ
Արցախու վիճակաւոր Առաջնորդ գերաւ Տէր
Սարգիս Զալալեանց Ս. Արքեպիսկոպոսն , որ 'ամ
սոց հետէ ի Ս. Էլմիաճնի կրթնուէր , յիշեալ
ամսոյն 19ին մեկնեալ է ի վիճակ իւր երթալու :
Նորին Սրբազնութիւնն անշուշտ արդէն հասած
լինելով ի Շուշի՝ իւր հոգեւոր հօտին որդիական
ջերմեռանդ սէրն կըվայելէ ի փոխարէն հայ-
րական բարեգութ խնամոց իւրոց :

«Գրամն այն դնի ի վերայ դեռնի ի շահաբե-
րութիւն և բերէ շահ մինչև ցարդ (այսինքն
մինչ 1873 թ.) չորս միլիոն ֆրանք . այլ ոչ ելին
ի դպրոցէ անտի մինչև ցարդ չորս աշակերտք
ըստ նպատակի հանդուցեալ բարեբաբին :

«Այս երկրորդ և պատասխանական թղթոյ
իմոյ ոչ արար ինչ պատասխանի գերապայծառ
Գեորգ Հիւրմիւզ . վառնդի մարդահաճութիւն և
մոտահաճութիւն արգել և խափան են նմա հա-
ւանել ճշմարտութեան» . . . : Յաւակցական քա-
նի մի նախադասութիւններն էլի աւելացնելով,
վերջացնում է պատկառելի ծերունին իր «Թըղ-
թակցութիւնը» այսպէս . . . «Մնամ յուսով լսել
ուստէք զճիշտ քննութիւն և զարդար դատ
ընդ այս գրութիւնս . . . :

Այս գրութիւնն էլ ու ուրիշ շատ և շատ անց-
քեր և պատմութիւններ գիտեն և ձեռքի տակ
ունեն մեր վարչութիւնքը , բայց ումն ես ա-
սում : Փոռք Աստուծո , այս բաղմալատուակ և
քաղմալեայ վարդապետը դեռ կենդանի առ-
րում է այստեղ . էլ ումն են սպասում ազգային
վարչութիւնքը , ինչի են կամենում իրանց
պէս , հայի մահու և կեանքի հարցերն էլ քնե-
ցնել , միթէ չգիտեն , որ այդ պիտի քուռը մա-
հու կարող է փոխուել յետոյ գնայ ու գնայ
վայ տուր ինչքան կուզես . . . :

Մուրատեան վարժարանի հարցից էլ աւելի
պատրաստ ծամած բերանը դնելու և կուլ տա-
լու բան կայ . . . արդեօք : ՅԱՐՈՅ

